ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2024 թվականի N 205-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի աշխատանքային կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ԱԲՈՒՆՑ ՎԼԱԴԻՄԻՐ
ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ
ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ
ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
ՏՈՌՈՋՅԱՆ ԱՐՏԱԿ
ՏՈՌՈՋՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 11
ք. Գորիս

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու
2024թ. հոկտեմբերի 11-ի թիվ 205-Ա որոշման

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

2 . ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3

3. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ... 3

4. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ..... 4

5. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 4

6. ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 6

7. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ..... 6

8. ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄ 7

9. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ..... 7

10. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ..... 8

11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ..... 8

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Գորիս համայնքում երիտասարդության քաղաքականության իրականացման, Գորիս համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի ձևավորման և գործունեության կարգը, սկզբունքները և մեխանիզմները:

1.2. Կանոնակարգը մշակվել է հիմք ընդունելով Գորիս համայնքի երիտասարդության քաղաքականության ռազմավարությունը 2025-2028 թվականների համար:

1.3. Կանոնակարգի նպատակն է ապահովել երիտասարդության քաղաքականության արդյունավետ իրականացումը և երիտասարդների ակտիվ մասնակցությունը համայնքի զարգացման գործընթացներում:

2 . ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Երիտասարդ՝ 16-35 տարեկան անձ:
2.2. Երիտասարդական խորհուրդ, որի անդամների առնվազն 2/3-ը երիտասարդներ են:
2.3. Երիտասարդական քաղաքականություն՝ համայնքի կողմից իրականացվող գործողությունների և միջոցառումների ամբողջություն՝ ուղղված երիտասարդների զարգացմանը և ինքնաիրացմանը:

3. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1.Կրթություն և մասնագիտական զարգացում
3.2.Զբաղվածություն և ձեռներեցություն
3.3.Մշակույթ և ժամանց
3.4.Քաղաքացիական մասնակցություն և սոցիալական ներգրավվածություն
3.5. Առողջություն և սպորտ
3.6 Կամավորական աշխատանք
3.7 ՏՏ ոլորտ

4. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

4.1.Գորիս համայնքի ավագանի
4.2.Համայնքի ղեկավար
4.3.Երիտասարդության հարցերով զբաղվող բաժին
4.4. Համայնքի ղեկավարի կից երիտասարդական խորհուրդ

5. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Խորհուրդը ձևավորվում է Գորիս համայնքի ղեկավարի ենթակայության ներքո, և որպես համայնքի ղեկավարի մշտական ներկայացուցիչ այն ներկայացնում է խորհրդում համայնքապետարանի աշխատակիցը: Համայնքապետի ներկայացուցիչը չի կարող լինել խորհրդի նախագահ:

5.2 Խորհրդի անդամների կազմը հաստատում է Գորիսի համայնքապետը:

5.3 Խորհուրդը կազմված է համայնքի ակտիվ երիտասարդներից, որոնք ներկայացնում են տարբեր բնագավառներ, կառույցներ՝ առանց որևէ խտրականության: Համայնքի յուրաքանչյուր բնակավայր պետք է ներկայացվի խորհրդում մեկական անդամով: Կանոնադրության համաձայն անդամների որոշմամբ խորհրդի անդամ կարող են լինել նաև մեկական անդամ համայնքում գործունեություն ծավալող երիտասարդ գործարար և երիտասարդ մշակութային գործիչ:

5.4 Խորհրդի անդամ կարող են ընտրվել 16-35տարեկան Գորիս համայնքում բնակվող և հասարակական ակտիվ գործունեություն ծավալող երիտասարդները:

5.6 Խորհրդի անդամ չեն կարող ընտրվել.

1)դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք.
2) հանցագործության համար դատապարտված անձինք.
3) զինված ուժերի ժամկետային զինծառայողները:

5.7 Խորհրդի կառավարումը իրականացնում է խորհրդի նախագահը, որը իրականցնում է նիստերի ղեկավարումը, աշխատանքների համակարգումը:

5.8. Խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի անդամների կողմից՝ փակ գաղտնի քվեարկությամբ՝ 2 տարի ժամկետով:

5.9 Խորհրդի կազմակերպչական գործունեությամբ զբաղվում է քարտուղարը, ով պատասխանատու է հետևյալ գործառույթների համար՝

1. հանդիպումների օրակարգի ծանոթացում,
2. նիստերի կազմակերպում,
3. արձանագրությունների կազմում:

5.10 Խորհրդի նախագահը, քարտուղարը իրենց պարտականությունները ստանձնում են երկու տարի ժամկետով խորհրդի նիստի փակ քվեարկության արդյունքում, նիստին ներկա անդամների ձայների 2/3-ի առկայությամբ:

5.11 Խորհրդի նախագահի, քարտուղարի համար առաջադրումը ազատ է յուրաքանչյուր անդամի համար:

5.12 Խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի անդամների կողմից՝ փակ գաղտնի քվեարկությամբ:

5.13 Խորհուրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 20-ը, խորհուրդը ձևավորվում է նվազագունը 15 հոգուց:

5.14 Խորհուրդի անդամների լիազորությունների փոփոխություն տեղի է ունենում խորհրդի նիստի փակ քվեարկության միջոցով, նիստին ներկա անդամների ձայների 2/3-ի առկայությամբ:

5.15 Խորհուրդի անդամի կողմից բարձրացված ցանկացած հարց ենթակա է քննարկման, անհրաժեշտության դեպքում նաև քվեարկման:

5.16 Խորհրդի անդամի փոփոխությունը հաստատում է համայնքապետը:

5.17 Խորհրդի նոր անդամի թեկնածությունները ներկայացվում է համայնքապետին հաստատման համար խորհրդի անդամների կողմ ձայների նվազագույնը 2/3-ի առկայության դեպքում:

5.18 Խորհրդի անդամներն ընտրվում են սեփական դիմումի ներկայացումից հետո, համայնքապետարանի կողմից ձևավորված հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը դիտարկում է բոլոր թեկնածուների նախապես ներկայացրած դիմումները և կատարում ընտրություն: Ընտրության չափորոշիչը սահմանում է հանձնաժողովը:

5.19. Խորհրդի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ:

5.20 Խորհրդի անդամի լիազորությունները կարող են դադարել՝

ա/ անձնական դիմումի համաձայն,

բ/ անհարգելի պատճառով՝ 4 անգամ անընդմեջ նիստերին չմասնակցելու պատճառով,

գ/ խորհրդի անդամների 2/3-ի որոշմամբ՝ հիմնավոր պատճառաբանությամբ/,

5.21 Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում նոր անդամի ընտրությունը կատարվում է սույն կարգով՝ մեկամսյա ժամկետում:

6. ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Խորհուրդը ներկայացնում է Գորիս խոշորացված համայնքում առկա խնդիրների վերաբերյալ երիտասարդության կողմից ձևավորված կարծիքը և բարելավման առաջարկները Գորիսի համայնքապետին:

6.2 Խորհրդի կողմից վերհանված խնդիրները ըստ անհրաժեշտության և առաջնահերթության ներկայացվում են ծրագրի տեսքով՝ հետագա իրականացման նպատակով:

6.3 Խորհուրդը կարող է համագործակցել այլ հասարակական, քաղաքական կառույցների և անհատների հետ, ինչպես նաև մասնակցել հասարակական քննարկումներին, նախաձեռնություններին:

6.4 Խորհուրդը իրավունք ունի մասնակցելու համայնքի ավագանու նիստերին, բյուջեի քննարկմանը, ռազմավարությունների մշակմանը:

6.5 Խորհուրդը իրավունք ունի մասնակցել Գորիս համայնքի երիտասարդական քաղաքականության ռազմավարութան իրականացման համար տրամադրված ֆինանսական միջոցների կառավարմանը:

7. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

7.1 Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

7.2 Կախված խորհուրդի աշխատանքներից կարող են կազմակերպվել նաև արտահերթ նիստեր:

7.3 Արտահերթ նիստ կարող է հրավիրել խորհրդի անդամների առնվազն 2/3-ի կողմից:

7.4 Նիստը համարվում է չկայացած, եթե նիստից բացակայում են խորհրդի անդամների կեսը:

7.5 Խորհուրդի նախագահի բացակայության դեպքում նիստը կարող է վարել նախագահի կողմից լիազորված անդամը:

7.6 Քարտուղարի բացակայության դեպքում, նրա պարտականությունները իրականացնում է խորհրդի անդամներից մեկը՝ նախագահի առաջարկով:

7.7 Արձանագրությունները կազմվում են ներառելով քվեարկության արդյունքները, որոշումները, առաջարկները և ստորագրվում են նիստին մասնակցած անդամների կողմից:

7.8 Նիստին մասնակցած անդամներից յուրաքանչյուրի ստորագրությունը պարտադիր պետք է լինի տվյալ նիստի արձանագրության մեջ, այլապես այն չի կարող համարվել լիարժեք փաստաթուղթ և չի կարող ներկայացվել համայնքապետին:

7.9 Խորհուրդի օրակարգային հարցերի ձևավորման համար պատասխանատու է խորհուրդի նախագահը:

7.10 Խորհուրդի կողմից ներկայացված ծրագրերը համապատասխան ընթացակարգով հաստատվելուց հետո կիրականացվեն խորհրդի, ինչպես նաև համայնքում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների միջոցով:

8. ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄ

8.1 Խորհուրդի գործունեության կասեցումը իրականացվում է Գորիս համայնիք ղեկավարի որոշմոմբ:

8.2 Խորհուրդի կանոնակարգի հաստատումը, նրանում փոփոխությունները իրականցվում են անդամների առաջարկների հիման վրա, հաստատվում քվեարկության արդյունքում՝ առնվազն 14 կողմ ձայների դեպքում:

9. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

9.1. Երիտասարդական ծրագրերը ֆինանսավորվում են համայնքային բյուջեից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ հաստատված համայնքապետարանի կողմից:

9.2. Յուրաքանչյուր տարի համայնքային բյուջեում կարող է նախատեսվել հատուկ հոդված երիտասարդական ծրագրերի ֆինանսավորման համար:

9.3. Երիտասարդական ծրագրերի ֆինանսավորման համար կարող է կիրառվել նաև մասնակցային բյուջետավորման սկզբունքը:

10. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

10.1. Երիտասարդության քաղաքականության իրականացման մշտադիտարկումն իրականացնում է Գորիսի համայնքապետարանի երիտասարդության հարցերով զբաղվող բաժինը:

10.2 Երիտասարդական խորհուրդը տարեկան հաշվետվությունը ներկայացվում է համայնքի ավագանուն, որը հրապարակվում է համայնքի պաշտոնական կայքում:

10.3 Յուրաքանչյուր երկու տարին մեկ իրականացվում է Գորիսի համայնքի երիտասարդական ռազմավարության միջանկյալ գնահատում:

11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1 Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

11.2 Կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել համայնքի ավագանու որոշմամբ:

11.3 Սույն կանոնակարգի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը: